

**ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի  
Որոշում N 1/291Ա**

**05/06/2020**

**«ԱՅԴԻԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն 2020 թվականի մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել՝ 10,000,000,000 ՀՀ դրամ, 50,000,000 ԱՄՆ դոլար և 10,000,000 եվրո ծավալով արժեկտրոնային անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ծրագրային ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն 2020 թվականի մայիսի 27-ին ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացրել նաև ծրագրային ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի հունիսի 03-ի թիվ 25 արձանագրություն՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գրանցել «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված՝ 10,000,000,000 ՀՀ դրամ, 50,000,000 ԱՄՆ դոլար և 10,000,000 եվրո ծավալով արժեկտրոնային անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ**